ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժինը՝ /այսուհետ Բաժին/ 2024 թվականի ընթացքում կատարել է հետևյալ աշխատանքները.

. ՀՀ դատական տարբեր ատյաններում՝ առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ և հակակոռուպցիոն դատարաններում 2024 թվականի ընթացքում քննվել են թվով 18 դատական գործեր՝ որոնցից 2-ը քրեական, 5-ը վարչական և 11-ը քաղաքացիական գործեր։

. Պատրաստվել և տարբեր դատական ատյաններ են ներկայացվել հայցադիմումների պատասխաններ, միջնորդություններ, վերաքննիչ բողոքներ, վճռաբեկ բողոքներ և գրություններ։

. ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել և ստացել ենք դատական գործերին վերաբերվող փաստաթղթեր, նյութեր և որպես ապացույցներ ներկայացրել տարբեր դատական ատյաններ՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի շահերի պաշտպանության գործընթացը իրականացնելու նպատակով։

. Նախապատրաստվել և մասնակցել բոլոր դատական ատյաններում գտնվող գործերի նախնական դատական նիստերին և դատաքննություններին։

. Իրականացրել է ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության հետ տարվող աշխատանքներ։

. Բաժին է մուտքագրվել թվով 345 գրություններ, դիմումներ, բողոքներ, հարցումներ և այլն։

. Բաժնից ելքագրվել են թվով 193 գրություններ, պատասխաններ հարցումներ և այլն՝ որոնք ուղղվել են տարբեր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դատական ատյանների, քաղաքացիների և այլն։

. Բաժնի կողմից կատարվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված թվով 4605 իրավական ակտերի օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համապատասխանության վերաբերյալ եզրակացությունների տրամադրման աշխատանքների իրականացում.

. Իրականացրել է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմում նախապատրաստված ՀՀ Շիրակի մարզպետի թվով 612 որոշումների,

պայմանագրերի նախագծերի օրենսդրության համապատասխանության ստուգում, իրավական լուծումներ պահանջող հարցերով եզրակացությունների կազմման աշխատանքներ.

. Իրականացրել է ՀՀ Շիրակի մարզպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքներ.

. Իրականացրել է Բաժնի խնդիրներից բխող այլ իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների տրամադրման աշխատանքների իրականացում.

. Իրականացրել է մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ մասնագիտական քննարկումներ, առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքներ և տրամադրել խորհրդատվություններ։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Նիկոյան
20 փետրվարի 2025թ.